

այսպէս գրի. « Տամ զգիրս զայս նահանգիս առաջնորդացն. և այժմ է Տէր Յօհաննէս արքեպիսկոպոս Ռուզաց և Օլախաց աշխարհի, հոգեւոր առաջնորդ նահանգիս և մեզ: Եւ գրեցաւ ի թվին Հայոց ՊԽԷ, մարտի ԻԵ: » Զսա յիշէ և Աւետիք արքեպիսկոպոսն՝ ի վայր, յամի 1446 ի կոնտակ(ին) (1):

1414. Արքեպիսկոպոսութիւնն Լէօպօլսի Լեհաց՝ յայսմ ամի ի Հալիչէն բերաւ ի Լէօպօլիս քաղաքն (2):

1445. Տէր Աւետիք երրորդ եպիսկոպոսն մեր Լէօպօլսի, զոր Կամենցացիք թղթովք իւրեանց և եպիսկոպոսին Լեհաց, նա և Պր. Ստեփանին՝ որ էր դուքս Ռուզաց ի տոհմէ Գօրիօվիչաց, առաքեցին յԷջմիածին՝ առ Գրիգոր կաթողիկոսն, առ ի հաստատել առաջնորդ: Զոր կաթողիկոսն հաստատեալ և զՍէչովու թեմն նմա ստորադրեալ, պատասխանէ, զկնի բանից ոմանց՝ գրելով. « Եկն Տէր Աւետիք եպիսկոպոսդ, սիրելի որդիդ մեր՝ առ մեզ. և եբեր զձեր » Վկայական թուղթն, և զՀոռոմ եպիսկոպոսի նշանն, և զՊարոն Ստեփանին. և մեք զՏէր Աւետիքդ՝ որ ձեզ եպիսկոպոս էր բնական, այլ կրկին » և վերստին հաստատեցաք. և զՍէչով քաղաքն՝ իւր զեղանով շնորհեցաք » իւրն սեպական թեմ և վիճակ... Թվ. ՊՂԳ. Օգոստ. ԺԷ: » Աստուտ յայտ է թէ արքեպիսկոպոսունքն մեր Լէօպօլսի՝ իրաւարար մակագրին եպիսկոպոսունք Պուշտանայ Հայոց. և ոչ միայն այս Աւետիքն, այլ և նախորդքն նորա՝ Յովհաննէս և Գրիգոր՝ այսպէս անուանէին զինքեանս: — Թղ. Կամեն. Դիւան:

1446. Տէր Աւետիք արքեպիսկոպոսն յայսմ ամի դառնայ ի Կամէնից, և զՏիրատուր աւագերէցն կրկին հաստատէ, որպէս Կոնտակն իւր ցուցանէ, այսպէս. « Տէր Աւետիք արքեպիսկոպոս ամենայն Ռուզաց և Օլախաց աշխարհի. » եկաք ի Կամենից աստուածաշէն քաղաքն, և գտաք հաստատած ի մեր նախնեաց, ի Տէր Յօհաննէս և ի Տէր Գրիգոր արհեպիսկոպոսացն՝ զՏիրատուր քահանայն՝ աւագերէց. նոյնպէս և մեք կու հաստատեմք », և այլն: Թվ. ի Ծննդենէն Քրիստոսի ՌԻՃԽԶ. օգոստ. Ա: » ի Կոնտակ:

1461. ԶԺ. Տէր Խաչատուրն ընդ այսու ժամանակաւ յետ մահու Աւետիքի նստի արքեպիսկոպոս Լէօպօլսի, զոր՝ կոնտակն կառուցման զանկակատանն եկեղեցւոյն Ս. Նիկողայոսի՝ որ ի Կամէնից՝ յիշէ յամի Տեառն 1493: Խաչատուր արքեպիսկոպոսն Լէօպօլսի Հայոց՝ էր յայսմ ամի, ասէ Եղու Հէրպ: Տես 1478:

1. Յիշեալ Կոնտակ եկեղեցւոյն է պայմանագիր շինողին, որ է Պր. Սինան որդի Խութլուպէյի. որոյ այս է պատկերն և ձեռագիրն: Իսկ Ս. Նիկող. վրայք երկար տեղեկութիւն գրած են Հ. Մին. Բժշկեանն ի Ճանապարհորդ. եր. 136-48. և Քուշերեանն Հ. Քերովբէ:

2. Բնիկ Լեհաց համար է ըսածն. այն ատեն և աւելի առաջ՝ մեծ և հարուստ քաղաք էր Հալիչ (Halisz), հիմայ նուազեալ: